

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

2007 թվականի հոկտեմբերի 6-ի

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունը, այսուհետ՝ Կողմեր, հիմք ընդունելով «Եվրասիական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» 2000 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագիրը, փոխադարձ առեւտրում ապրանքների ազատ տեղաշարժի եւ երրորդ երկրների հետ Մաքսային միության առեւտրի բարենպաստ պայմանների ապահովման, ինչպես նաեւ Կողմերի տնտեսական ինտեգրման զարգացման նպատակով, համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն Պայմանագրում գործածվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

«միասնական մաքսային տարածք»՝ Կողմերի մաքսային տարածքներից բաղկացած տարածք.

«միասնական մաքսային սակագին»՝ մաքսատուրքերի դրույքաչափերի խումբ, որոնք կիրառվում են երրորդ երկրներից դեպի միասնական մաքսային տարածք ներկրվող ապրանքների նկատմամբ եւ որոնք համակարգված են ըստ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի.

«Մաքսային միություն»՝ Կողմերի առեւտրատնտեսական ինտեգրման ձեւ, որը նախատեսում է միասնական մաքսային տարածք, որի սահմաններում միասնական մաքսային տարածքի հետ իրականացվող, ինչպես նաեւ երրորդ երկրների հետ իրականացվող եւ այդ մաքսային տարածք ազատ շրջանառության մեջ բաց թողնված ապրանքների փոխադարձ առեւտրում չեն կիրառվում մաքսատուրքեր եւ տնտեսական քնույթի սահմանափակումներ՝ բացառությամբ հատուկ պաշտպանական, հակադեմփինգային եւ փոխհատուցման միջոցների: Ընդ որում, Կողմերը կիրառում են միասնական մաքսային սակագին եւ երրորդ երկրների հետ ապրանքների առեւտրի

կարգավորման այլ միասնական միջոցներ.

«Երրորդ երկրներ»՝ սույն Պայմանագրի կողմ չհանդիսացող պետություններ:

Հոդված 2

Կողմերի մաքսային տարածքների՝ մեկ միասնական մաքսային տարածքում միավորելու եւ Մաքսային միություն ձեւավորելու մասին որոշումն ընդունվում է Մաքսային միության բարձրագույն մարմնի կողմից հետեւյալ միջոցներն ավարտելուց հետո՝

ա) միասնական մաքսային սակագնի եւ երրորդ երկրների հետ արտաքին առեւտրի կարգավորման այլ միասնական միջոցների սահմանում եւ կիրառում.

բ) երրորդ երկրների հետ հարաբերություններում առեւտրի միասնական ռեժիմի սահմանում եւ կիրառում.

գ) մաքսատուրքերի, համարժեք կիրառելիություն ունեցող այլ տուրքերի, հարկերի եւ վճարների ներառման եւ բաշխման կարգի սահմանում ու կիրառում.

դ) ապրանքների ծագման երկրների որոշման միասնական կանոնների կիրառում.

ե) ապրանքների մաքսային արժեքի որոշման միասնական կանոնների կիրառում.

զ) արտաքին եւ փոխադարձ առեւտրի վիճակագրության միասնական մեթոդաբանության սահմանում եւ կիրառում.

է) մաքսային կարգավորման ընդհանուր կարգի, այդ թվում՝ ապրանքների հայտարարագրման եւ մաքսային վճարների միասնական կանոնների ու մաքսային միասնական ռեժիմների սահմանում եւ կիրառում

ը) Մաքսային միության մարմինների հիմնադրում եւ գործունեության ծավալում, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են Կողմերին վերապահված իրավասության շրջանակներում.

Հոդված 3

Կողմերը միասնական Մաքսային միության տարածք ստեղծելու պահից փոխադարձ առեւտրում չեն կիրառում մաքսատուրքեր, քանակական սահմանափակումներ եւ դրանց

համարժեք միջոցներ:

Սույն հոդվածում ոչինչ չի խոչընդոտում, որ Կողմերը փոխադարձ առեւտրում կիրառեն հատուկ պաշտպանական միջոցներ, հակադեմփինգային եւ փոխհատուցման միջոցներ, ինչպես նաեւ ներմուծման կամ արտահանման սահմանափակումներ եւ արգելքներ, որոնք անհրաժեշտ են հանրային բարոյականության, մարդու կյանքի կամ առողջության, բույսերի ու կենդանիների պաշտպանության, բնապահպանության եւ մշակութային արժեքների պահպանության համար՝ պայմանով, որ նման արգելքներն ու սահմանափակումները չեն համարվում առեւտրի ոչ արդարացված խտրականություն կամ թաքցված սահմանափակում:

Հոդված 4

Եթե մինչեւ միասնական մաքսային տարածքի ստեղծումը Կողմերի միջեւ գործող երկկողմ միջազգային պայմանագրով նախատեսվում է սույն Պայմանագրով նախատեսված ռեժիմից ավելի բարենպաստ ռեժիմ՝ ապրանքների ներմուծման կամ արտահանման գծով գանձվող մաքսատուրքերի եւ հավաքագրումների, նման տուրքերի ու հավաքագրումների գանձման մեթոդների, Կողմերի միջեւ ապրանքների փոխադարձ առեւտրում կիրառվող կանոնների եւ վարչական ընթացակարգերի համար, ապա կիրառվում են այդ միջազգային պայմանագրերի դրույթները:

Հոդված 5

Միասնական մաքսային տարածք ստեղծելու պահից ապրանքների ներմուծման կամ արտահանման գծով գանձվող մաքսատուրքերի եւ հավաքագրումների, նման մաքսատուրքերի ու հավաքագրումների գանձման մեթոդների, ապրանքների ներմուծման կամ արտահանման գծով կիրառվող կանոնների եւ վարչական ընթացակարգերի հետ կապված ռեժիմը, որը Կողմերից յուրաքանչյուրը միջազգային պայմանագրով կամ փաստացիորեն կիրառում է ցանկացած երրորդ երկրի նկատմամբ, չի կարող ավելի բարենպաստ լինել, քան այն ռեժիմը, որը տվյալ Կողմը կիրառում է մյուս Կողմերի նկատմամբ:

Հոդված 6

Կողմերի միջեւ սույն Պայմանագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են համապատասխան Կողմերի խորհրդակցությունների եւ

բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, վեճը փոխանցվում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 7

Սույն Պայմանագրում փոփոխություններ եւ լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ արձանագրությունների միջոցով:

Հոդված 8

Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման:

Սույն Պայմանագիրն ուժի մետ մտնելու, դրանից դուրս գալու եւ դրան միանալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային բազան ձեւավորող միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրությամբ:

Կատարված է Դուշանբե քաղաքում, 2007 թվականի հոկտեմբերի 6-ին, մեկ քնօրինակով՝ ռուսերենով:

Սույն Պայմանագրի քնօրինակը պահվում է ԵվրԱզԷսի ինտեգրման հարցերով կոմիտեում, որը համարվում է սույն Պայմանագրի ավանդապահը, եւ վերջինս յուրաքանչյուր Կողմի կփոխանցի դրա հաստատված օրինակը:

Բելառուսի	Ղազախստանի	Ռուսաստանի
Հանրապետության	Հանրապետության	Դաշնության
կողմից՝	կողմից՝	կողմից՝
(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
